

տակին մէջ: Օտարները սակայն՝ մանաւանդ եւրոպացիները Ս. Հեղինէին անունով կը ճանչնան զայն, անտարակոյս վերեւ պարզուած պատճառով. վերջապէս աւանդութիւնը Ս. Լուսաւորչի եկեղեցին ու Գիւտխաչի այրը իրարու կոպած է փրկչական խաչի յիշատակներով:

Եկեղեցին այժմ թէև հինցած ու անշուք, բայց յայտնի է թէ ունեցած էր և ունի ճարտարապետական գեղեցկութիւն. անոր չորս սիւներու խոյակները կը կրեն բիւզանդական քանդակադորձութեան հետքեր. շէնքին հայկականութիւնը կը շեշտուի եկեղեցիին ճիշտ մէջ տեղը չորս սիւներու վրայ սրբուն կաթուղիկէի մը կառուցումով. եկեղեցիին արևմտեան կողմի յատակը աւելի բարձր է և յանկարծ կը ցածնայ և կը հաւասարի ատեանին. երկու կողմի մեծ պատերը շեղակի կը միանան արևմուտք գտնուած միջին դարու երկու փոքր կողակներու հիման: Կ'երևի որ Խաչակիրները անփոփոխ պահած են այս եկեղեցիին հին կառուցուածքը, միայն մեծ յարզանքով մը նորոգութիւններ կատարած են անոր մէջ: Շատ զարմանալի երեւոյթներ կը ներկայացնէ այս եկեղեցին, գեղաքանդակ խոյակներով սիւները՝ կը տեսնուի որ՝ հաստատուած են պարզ քարերով հիւսուած պատուանդանի վրայ. ճարտարապետութեան եւ գեղարուեստի տեսակէտով շէնքը իր ամէն կողմերովը համեմատական չէ:

Ուղեգիրները կը ծանօթագրեն թէ (Տե՛ս Hanauerի «Walks in and Around Jerusalem», էջ 101-3), ըստ ժողովրդային զրոյցներու, այս եկեղեցիին հիւսիսային պատին վրայ, աջակողման սեղանին մօտ, նախապէս կար բացուածք մը ուրկէ յտակ կերպով իբր թէ դժոխքէն կը լսուէին պատիժի ենթարկուած տառապող հոգիներու հառաչանայ և աղաղակներու ձայները, բայց յետոյ այդ բացուածքը զոցուած է: Այս զրոյցին մէկ տարբերակն կը թուի Գեթսեմանի Առաքելոց այրէն մինչև լեռը երկարող ստորերկրեայ ուղիէն լսուած դժոխոց ձայնը զոր տեղացիք պատմած են Արգուլֆ Եպիսկոպոսին եւ զոր համիմաստ տողերով կը յիշատակէ Գրիգոր վրդ. Տաթևացին իր «Հարցմանց» գիրքին մէջ (էջ 504):